գնացեր են Ծաղկազարդին շաբաթ օրն մօտ ի զատին և Էմինին և ի պարոնն, թէ եկէք զՑարութեան դուռն բացէք, որ ի ներս մտեմք։ Զատին և Էմինն և պարոնն՝ ասցեր են Հռոմին պատրիարգին, թէ Թող հայ ազգն այլ գայ, և ապա զդուռն բանամք. և Հռոմին ասցեր են, թէ այն չորս ազգն չեն ի դար. մեզի բաց որ ի ներս մտնեմք։ Եւ յամէն մարդոյ գլուխ Հռոմին չորս չորս ֆլորի են ժողովեր և տվեր են Էմինին. և ապա Թողեր են որ ի ներս են մտել. և ճաշուն՝ ի Ցարութիւն կու մտնուն ուրախութեամբ. և յետ ժամ եղեր՝ և լոյս չէ ելեր. և ճրագվառք եղեր է՝ և լոյս չէ ելեր. և պառկել ժամ եղեր է՝ և լոյս չէ ելեր։ Եւ յետոյ պարոնին մարդիքն և են. կիչարիքն և զատուն մարդիքն և սուպաշուն և Էմինին մարդիքն զՀռոմին ծեծեր և ի դուրս են արեր. և զՀռոմին պատրիարգն և զգլուխ եպիսկոպոսնին, և զգլուխ աքապուռնին? զամմէնն ի զնտան կու ձգեն, և կ'ասեն, թէ ի ձեր հաւատոցն վերայ պակասութիւն գտաք. և զամէնն կու տուգնեն[1]. ի պատրիարգէն՝ Ռ և Եձ (1500) ֆլորի կ'առնուն, և ի ժողովուրդենէն՝ յորմէ ճ ֆլորի կ'առնուն, յորմէ Եմ ֆլորի, և յորմէ Ծ, յորմէ Կ, յորմէ Ժ. զՀռոմներուն մեծ ու փոքր՝ զամէնն կու տուգնեն. և Հռոմ ազգն սևերես լինալուն՝ մէկ շաբաթ ի դուրս չեն ելեր. և ոչ ի մարդոյ յերես են նայեր։ Այս Հռոմ ազգն պիզմի[2] ազգ է. ոմանք զատիկ արեր են և յոմանք հետ Հայոց ապրիլի ԺԳ զատիկ են արեր. և երբ մեր զատիկն եկեր է՝ նայ գնացեր են Հռոմին ի զատին և ի պարոնն, թէ մեք այլ կրկին ի Ցարութիւն կու մտեմք. և Հայերն ասցեր են զատուն, թէ Նոքա զիրենց զատիկն արին, հետ մեզ Թող ի ներս չմտնուն. և զատին այլ կ'ասէ, թէ խիստ աղէկ, Թող չի մտնուն. և Հայոց ազգն և Ասորին և Նեստորն և Մարունին մըտեր են ի Ցարութիւն. և Յերուսաղեմայ քաղաքին պարոնն և Էմինն, և բերդին ենիչարիքն և ութ զատի և տաճարին մեծ չեխն, և Երուսաղեմայ քաղաքին գլխաւոր տաճկնին, ամէնն իրենց մարդուցմովը կու մտնուն ի Ցարութիւն, և զկանթեղնին կու մարեն, և կու նստին ի Քրիստոսի գերեզմանին դուռնն ի վերայ, թէ տեսնումք թէ ո՞րպէս կ'ելնէ լոյսն։ Եւ Հայոց ազգս ուրախութեամբ ի շուրջ են եկեր. և երբ լուսն ելնելու ատեն եղեր է, և հանդարտ որոտում եղեր է. և Սուրբ Լուսաւորչին աղաւթիւքն և բարեխօսութեամբն լոյսն բխեր է, և Լուսաւորչին կանթեղն ինքն ընդ ինքն վառեր է. և պարոնն և Էմինն և զատեստանն և այլ տաճկինին զլոյսն տեսեր են, և ասցեր են մեր եպիսկոպոսին, թէ լոյսն ելաւ. և կու մտնեն ի ներս, մեր լուսարար Տէր Սամվել եպիսկոպոսն, և զլոյսն ի դուրս կու բերէ Հայոց ազգիս. և տաճկանց ազգն ամէն կու տեսնուն և կու զարհուրին և կ'ասեն, թէ հաւատքն Հայուն է։ Եւ Հայոց ազգս խիստ ուրախացան որ Աստուծոյ ողորմութեամբն պարզերես եղաւ, և Հռոմաց ազգն սևերես եղաւ, և գլխիկոր։ Եւ Յերուսաղէմ քաղաք տաճկաց ազգն Հռոմին կ'ասեն եղեր, թէ

1. Տուգանք կ'առնուն։ — 2. Հակառակող։